

Ինչպես ստեղծել ձեռքի գծապատկեր և նամակ	
Քայլ 1 Ներածություն	
-	Կարդացե՛ք «Պայմաններ և դրույթներ» (“Terms & Conditions”) և «Գաղտնիության քաղաքականություն» (“Privacy Policy”) կետերը (միայն անգլերեն տարբերակով), որից հետո նախ սեղմե՛ք «Ընդունել» (“Accept”), իսկ այնուհետև «Հաջորդը» (“Next”) հրամանները:
-	Ուշադրությու՛ն: Եթե դուք 18 տարեկանից փոքր եք, ապա «Պայմաններ և դրույթներ» (“Terms & Conditions”) և «Գաղտնիության քաղաքականություն» (“Privacy Policy”) կետերը պետք է ընթերցեք ծնողի կամ խնամակալի ներկայությամբ, որից հետո միայն սեղմեք «Ընդունել» (“Accept”) հրամանը:
Քայլ 2 Տեղեկություններ մասնակցի վերաբերյալ	
-	1) Ընտրե՛ք Ձեր երկիրը կամ վարչական շրջանը
-	2) Գրե՛ք Ձեր անունը (ազգանունը լրացնել չի պահանջվում)
-	3) Ընտրե՛ք կարգավիճակը. բուժումն ավարտված է / բուժումն ընթացքի մեջ է / հիվանդը մահացել է:
-	4) Լրացրե՛ք էլեկտրոնային հասցեն (մասնակցության հավաստագիրն ուղարկելու նպատակով), այնուհետև հաստատման համար կրկնե՛ք այն:
-	5ա) Ընտրե՛ք տարիքային խումբը. եթե դուք 18 և ավելի տարեկան եք, ընտրե՛ք «18 և բարձր» կետը, այնուհետև սեղմե՛ք «Հաջորդը» (“Next”) հրամանը:
-	5բ) Ընտրե՛ք տարիքային խումբը. եթե դուք 18 տարեկանից փոքր եք, ընտրե՛ք «18-ից ցածր» կետը, ապա ներմուծե՛ք ծնողի կամ խնամակալի անունը, որից հետո միայն կարող եք սեղմել «Ընդունել» (“Accept”), իսկ այնուհետև «Հաջորդը» (“Next”) հրամանները:
Քայլ 3 Ձեռքի գծապատկերի ստեղծում	
-	Օգտագործե՛ք Ձեր երևակայությունը Ձեր նախընտրած ոճի և գույնի ձեռքի գծապատկեր ստանալու համար: Գծապատկերի եզրերից դուրս ներկված գույները չեն ցուցադրվի:
-	Ավարտելուց հետո սեղմե՛ք «Հաջորդը» (“Next”) հրամանը:
Քայլ 4 Հույսի նամակ	
-	Խնդրում ենք ստորև առկա դաշտում տեղադրեք Ձեր «Հույսի նամակը», որպեսզի ցույց տաք Ձեր քաջությունը, խիզախությունը և դիմացկունությունը:
-	Նամակը կարող եք գրել Ձեր մայրենի լեզվով:
-	Ավարտելուց հետո սեղմե՛ք «Նախադիտում» (“Preview”) հրամանը:
Քայլ 5 Հաստատում	
-	Այժմ դուք կարող եք տեսնել, թե ինչպիսի տեսք ունի Ձեր մասնակցության հավաստագիրը:
-	Եթե դուք հավանում եք այն, սեղմե՛ք «Հաստատել» (“Confirm”) հրամանը:
-	Եթե դուք ցանկանում եք փոփոխություններ կատարել սեղմեք «Նախորդը» (“Back”) հրամանը:
•	Ծնորհակալություն մանկական քաղցկեղի միջազգային օրվան նվիրված #throughourhands նախաձեռնությանն աջակցելու համար:
•	Ձեր հաղորդագրությունն ուղարկվել է ստուգման: Յոթ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցության հավաստագիրը կուղարկվի Ձեր գրանցած էլեկտրոնային հասցեին:
Վերջ	